

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՊՀ-ի պաշտոնաթերթ՝ «Երեւանի համալսարան»-ի 2005թ. սեպտեմբերի 10-ի համարում տպագրվեց տեղեկատվություն այն մասին, որ Կանադայում ապրող նախկին եգիպտահայերը Մոնրեալում կազմակերպել են «Մաշտոց Կրթական Հիմնադրամ» եւ այդ մարմնին կից՝ Երեւանյան մասնաճյուղի վարչություն:

Նորից հիշեցնում ենք, որ Հիմնադրամի նպատակն է դրամական օգնություն ցույց տալ համալսարանում սովորելու տարիներին ուսման մեջ առաջադեմ, օրինակելի վարքով եւ նյութական սուղ պայմաններում ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող սահմանափակ թվով միայն հայ երիտասարդների:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար հիմնադրամը 5 ֆակուլտետների հատկացնում է 5 հատ կրթաթոշակ՝ յուրաքանչյուրը 1000 ԱՄՆ դոլար: Ֆակուլտետները որոշում է Հիմնադրամի վարչությունը:

Այսօր կարելի է ուրախությամբ արձանագրել, որ Հիմնադրամն արդեն կայացած կազմակերպություն է, որովհետեւ ներկա դրությամբ արդեն ԵՊՀ-ի 10 ուսանողներ Հիմնադրամի սաներ են:

Այսպես.

1. 2005-2006թթ. ուսումնական տարվանից թոշակառուներ են.
  - Ավետիսյան Մելինե՝ Աստվածաբանության ֆակուլտետ
  - Հարությունյան Լամարա՝ Բանասիրության ֆակուլտետ
  - Պետրոսյան Զնարիկ՝ Պատմության ֆակուլտետ
  - Չուլայան Նարեկ՝ Արեւելագիտության ֆակուլտետ
  - Չոփիկյան Նարինե՝ Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ

2. 2006-2007թթ. ուսումնական տարվանից թոշակառուներ են.

- Ֆերմանյան Լեւոն՝ Զիմիայի ֆակուլտետ
- Մկրտչյան Արմենուհի՝ Կենսաբանության ֆակուլտետ
- Ներսեսյան Արմեն՝ Ֆիզիկայի ֆակուլտետ
- Բաբայան Սարգիս՝ Երկրաբանության ֆակուլտետ
- Մելիքյան Նարեկ՝ Պատմության ֆակուլտետ

- 2007-2008թթ. ուսումնական տարվա համար նույնպես հատկացված է 5 հատ կրթաթոշակ՝ հետեւյալ 5 ֆակուլտետների համար.

- Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ՝ 1 թոշակ
- Ժուռնալիստիկայի ֆակուլտետ՝ 1 թոշակ
- Հոգեբանության ֆակուլտետ՝ 1 թոշակ
- Մեխանիկա-մաթեմատիկայի ֆակուլտետ՝ 2 թոշակ (1 հատ մեխանիկա եւ 1 հատ մաթեմատիկա)

«Մաշտոց Կրթական Հիմնադրամ»-ի սան դառնալու համար հայտարարված մրցույթին կարող են մասնակցել միայն այն ուսանողները, որոնք այս տարի ընդունվել են նշված ֆակուլտետներից որեւէ մեկը վճարովի ուսման կարգավիճակով եւ նյութապես անապահով են: Այս կապակցությամբ հայտնում ենք հետեւյալը.

1. Կրթաթոշակառուներ որոշվելու է միայն մրցույթային կարգով՝ 2008թ. փետրվարին, երբ արդեն առաջին կիսամյակի համար նախատեսված բոլոր քննությունները հանձնված են.
2. Ներկայացված փաստաթղթերի հիման վրա մրցույթն անց է կացվում Մոնրեալում (Կանադա).
3. Մրցույթին կարող են մասնակցել միայն այն ուսանողները, որոնք.
  - ա. Առաջին կիսամյակի բոլոր քննությունները հանձնել են միայն բարձր գնահատականներով եւ ցուցաբերել են օրինակելի վարք

բ. Կներկայացնեն դիմում (հատուկ ձեւի համաձայն): Թեկնածուն այն կարող է ստանալ Երեւանյան մասնաճյուղի վարչության նախագահից: Դիմումի ձեւում նշված բոլոր հարցերին թեկնածուն պարտավոր է տալ ճիշտ եւ սպառիչ պատասխաններ: Հակառակ դեպքում դիմումը չի քննարկվի: Դիմումը ներկայացնել մինչեւ 2008թ. փետրվարի 10-ը:

գ. Քանի որ մրցույթը կայանալու է սույն ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում, ապա մրցույթին հաղթած ուսանողը առաջին կիսամյակի համար իր մուծած ուսման վարձը կստանա վարչության համապատասխան անդամից՝ ներկայացնելով մուծման անդորրագիրը:

Թոշակառուն առձեռն կստանա նաեւ որոշակի գումար առօրյա ծախսերի համար:

Կրթաթոշակը տրվելու է ուսման ողջ ընթացքում, եթե թոշակառուն յուրաքանչյուր կիսամյակի քննությունները հանձնի միայն բարձր գնահատականներով եւ ցուցաբերի օրինակելի վարք:

Հակառակ դեպքում նա կզրկվի «Հիմնադրամի սան» համարվելու կարգավիճակից:

Հայցում ենք նշված ֆակուլտետների դեկանների լայն աջակցությունը, որպեսզի հնարավոր լինի մրցույթի համար յուրաքանչյուր ֆակուլտետից ստանալ ավելի քան 5 դիմում:

Ուշադրություն: Արդեն հիմնադրամի սաներ համարվող նշված 10 ուսանողները պետք է մինչեւ ս.թ. սեպտեմբերի 10-ը ներկայացնեն տեղեկանք իրենց ֆակուլտետների դեկանատներից անցյալ կիսամյակում ստացած գնահատա-կանների մասին, որպեսզի ստանան իրենց մուծած ուսման վարձը եւ համապատասխան հավելավճարը:

Սույն հայտարարության հետ կապված ցանկացած հարցով կարող եք դիմել Երեւանյան մասնաճյուղի նախագահին՝ պրոֆեսոր Նորայր Բեյլերյանին: Նրա նստավայրն է ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի մասնաշենքի թիվ 114 սենյակը (ֆիզիկական եւ կոլոիդների քիմիայի ամբիոն):

Հեռախոսներ. ներքին՝ 372, քաղաքային՝ 555172

"Մաշտոց Կրթական Հիմնադրամի"

Երեւանյան վարչություն: